

Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՀՄ 2012 թ. թիվ 16

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան լայնորեն և հրապարակայնորեն նշեց Արժանապատիվ աշխատանքի պայքարի համաշխարհային օրը: Այդ օրը կազմակերպվեց և անցկացվեց խաղաղ երթ Երևանի կենտրոնական փողոցներով: Երթը սկիզբ առավ Հյուսիսային պողոտա և Թումանյան փողոցների խաչմերուկից, այնուհետ ընթացավ Հյուսիսային պողոտայով, Աբովյան փողոցով դեպի Շահումյան հրապարակ և ավարտվեց Հանրապետության հրապարակում (<http://2012.wddw.org/english/events/article/the-procession-organized-by-the?lang=en#.UHPuBZjA8tm>):

Երթին մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՀԱՄԿ-ի նախագահ Է.Թումասյանը: Երթի մասնակցեցին ՀԱՄԿ-ի ղեկավարությունը, աշխատակազմը, ճյուղային հանրապետական միությունների և ՀԱՄԿ-ի երիտասարդական թևի ներկայացուցիչներ:

Երթի կարգախոսներ էին “Հոկտեմբերի 7-ը՝ արժանապատիվ աշխատանքի համար պայքարի համաշխարհային օր”, “Ուժեղ արհմիություններ - ուժեղ քաղաքացիական հասարակություն”, “Արժանապատիվ աշխատանք և արժանապատիվ աշխատավարձ աշխատողներին”, “Նոր աշխատատեղերի ստեղծում”, “Արհմիության ուժը միասնության մեջ է - միավորվեք արհմիություններին”, “Զբաղվածություն, օրինականություն, աշխատավարձ”, “Համախմբված գործողությունների համաշխարհային օր, մենք կհաղթենք միասին”: Այդ օրվա կապակցության Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հրապարակել էր Արժանապատիվ աշխատանքի օրվան նվիրված 2 տեսակի բուկլետներ, որոնցից մեկը լուսաբանում էր երիտասարդության խնդիրները: ՀԱՄԿ-ի երատասարդական թևի ներկայացուցիչները երթի ընթացքում, նաև երթին

հետո բաժանում էին դրանք քաղաքացիներին, միաժամանակ տեղեկացնելով նրանց արժանապատիվ աշխատանքի համար արհմիությունների գործողությունների մասին: Միջոցառմանը ներկա գտնվեցին որոշ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, և “Արմնյուզ” հեռուստաալիքով տեղեկություն տրվեց արհմիությունների նախաձեռնության մասին http://www.youtube.com/watch?feature=player_embedded&v=-kCeVNn2d6g:

Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը հանդես եկավ երթին իր բազմաթիվ անդամներով ճյուղային արհմիության դրոշի ներքո: Շնորհակալություն ենք հայտնում բոլոր մասնակիցներին համերաշխություն և միասնականություն ցուցաբերելու պատրաստակամության համար՝ մասնավորապես Աշտարակի, Թալինի, Արագածի, Նաիրիի, Հրազդանի, Մասիսի, Գավառի, Իջևանի, Նոյեմբերյանի Եղեգնաձորի, Վայքի տարածքային միությունների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի պատմության թանգարանի, “Մպասարկում” ՊՈԱԿ-ի, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, ՀՀ ոստիկանության և ոստիկանության պետական պահպանության վարչության, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, “Զատիկ” մանկատան աշխատողների արհեստակցական կազմակերպությունների նախագահներին և կուլեկտիվներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ճյուղային միության ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ բոլոր անդամ կազմակերպություններն են սահմանված կարգով վարում դրամարկղային գիրք, չնայած Ճյուղային միության կողմից բազմաթիվ զգուշացումներին: Հիշեցնում ենք, որ համաձայն “Դրամարկղային գործառնությունների մասին” ՀՀ օրենքի “դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով”:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ համաձայն “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենքի, որը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից՝ բոլոր գործատուները պետք է եկամտահարկի հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնեն էլեկտրոնային եղանակով: Այդ կապակցությամբ **2013թ. հունվարի 1-ից** բոլոր գործատուները պետք է ձեռք բերեն նույնականացման քարտ և էլեկտրոնային ստորագրություն, որը կարող են կիրառել էլեկտրոնային եղանակով եկամտահարկի հաշվետվությունները ներկայացնելու համար: Նույնականացման քարտի արժեքը հաստատված է 3000 դրամ, իսկ էլեկտրոնային ստորագրության տարեկան սպասարկումը՝ ևս 3000 դրամ: Համաձայն ՀՀ կառավարության որոշման, մինչև **սույն թվականի նոյեմբերի 30-ը** նույնականացման քարտ ձեռք բերելու դեպքում, կառավարությունը կհամաֆինանսավորի ծախսերի մի մասը:

Էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է

1. Ձեռք բերել **նույնականացման քարտ** PIN և PUK ծածկագրերով՝ դիմելով ոստիկանության տարածքային անձնագրային բաժանմունք: Նույնականացման քարտի արժեքն է 3000 ՀՀ դրամ: *Նույնականացման քարտն իր մեջ ներառում է էլ. ստորագրության հավաստագիր:*

2. Նոյեմբեր ամսից գրանցվել ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգ և ձեռք բերել տվյալ համակարգի **Օգտվողի անուն** և **Գաղտնաբառ**:

3. Նույնականացման քարտ ստանալուց և ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում գրանցվելուց հետո, 2012 թվականի դեկտեմբեր ամսից գրանցվել էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ-ի **առցանց** համակարգում՝ էլեկտրոնային ստորագրությունն ակտիվացնելու նպատակով:

Տվյալ գործընթացի դեպքում փաստաթղթեր չեն ներկայացվելու: Էլեկտրոնային ստորագրության տարեկան սպասարկման վճարը կազմում է 3000 դրամ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Մինչև 2012 թվականի նոյեմբերի 30-ը դիմողների ծախսերի մի մասը համաֆինանսավորում է ՀՀ կառավարությունը, ուստի մինչև այդ ժամկետը, էլեկտրոնային ստորագրության սպասարկման վճարը կտրվի անվճար, որի արդյունքում կբացառվի նաև գործատուների գրանցման անհրաժեշտությունը ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի առցանց համակարգում: Գործատուները կվճարեն միայն նույնականացման քարտի արժեքը՝ 3000 ՀՀ դրամ:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Կ Ա Պ Ե Ր

2012 թվականի սեպտեմբերի 12-ին Մոսկվայում կայացավ Արհմիությունների համընդհանուր համադաշնության (ԱՀՀ) 7-րդ համագումարը, որի պատվիրակն էր նաև Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-եր և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ե.Հակոբովան, նա առաջադրվել էր պատվիրակ պետհիմնարկների արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի կողմից: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից պատվիրակված էին ՀԱՄԿ-ի նախագահ Է.Թումայանը, Հայաստանի Հանրապետության “Էլեկտրաարհմիություն” արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Կ.Ալոյանը, Հայաստանի երկաթուղայինների

արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Խլղաթյանը, Հայաստանի տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Գ.Մահակյանը և Հայաստանի կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Գ.Ղարիբյանը:

Համագումարը ձևավորեց Արհմիությունների համըդհանուր համադաշնությունը խորհուրդը, գործկոմը, ընդունեց “2012-2017 թվականների ԱՀՀ գործունեության հիմնական ուղղությունների մասին” որոշումը, “Արհմիությունների երիտասարդական քաղաքականությունը”, “Մինիմալ աշխատավարձ. անկախ պետությունների արհմիությունների արդի մարտահրավերները և խնդիրները” “Ուաշտայանել աշխատողների իրավունքները, պահպանել արհմիութենական ազատությունները” հռչակագրերը, “Աշխարհի արհմիությունների հետ արժանապատիվ աշխատանքի և սոցիալական արդարության համար պայքարում” հայտարարագիրը և հանդես եկավ ԱԱՀ երկրների կառավարությունների ղեկավարներին ուղղված ”Տարածաշրջանի երկրների թոշակառուներին – կյանքի արժանապատիվ պայմաններ” ուղերցով: Համագումարը ընտրեց ԱՀՀ նախագահ Միխայիլ Շմակովին, ԱՀՀ գլխավոր քարտուղար Վլադիմիր Շերբակովին, ԱՀՀ փոխնախագահ Վիկտոր Կոռնյուշինին:

2012 թվականի սեպտեմբերի 18-ին կայացավ պետհիմնարկների աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) 6-րդ կոնգրեսը, որին որպես պատվիրակ մասնակցեցին Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ելենա Հակոբովան և Ազգային վիճակարարական ծառայության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, ՃՀՄ խորհրդի անդամ Մարգարիտա Պետրոսյանը: Կոնգրեսը ընտրեց ԱՄՖ նախագահ Վլադիմիր Սավչենկոին, ԱՄՖ փոխնախագահ Նիկոլայ Գավվային:

ԱՄՖ-ի 20-ամյակի կապակցությամբ ԱՄՖ-ի խորհուրդը որոշել էր որ անդամ ճյուղային միությունները ներկայացնեն առավել ակտիվ արհմիութենական լիդերներին հոբեյանական մեդալներով պարգևատրելու համար: Ճյուղային միության նախագահությունը քննարկեց նշված հարցը և միաձայն որոշեց պարգևատրելու համար ներկայացնել միայն այն կազմակերպությունների լիդերներին, որոնք կատարում են ՃՀՄ կանոնադրության պահանջները և ժամանակին վճարում են ՃՀՄ անդամավճարը:

2012 թվականի սեպտեմբերի 17-ին Գդանսկ քաղաքում կայացավ Արհմիությունների միջազգային համադաշնության (ITUC PERC) արհմիությունների իրավունքներին նվիրված 4-րդ հանդիպումը, որին որպես ՀԱՄԿ-ի ներկայացուցիչ մասնակցում էր Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահության անդամ, աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ Անահիտ Ասատրյանը:

Հանդիպումը նպատակ ուներ քննարկել և գնահատել ուժեղ ու թույլ կողմերը մարդու և արհմիությունների իրավունքի պաշտպանությանը ուղղված գործունեության և մշակել քայլեր տարածաշրջանում այդ գործունեության բարելավման համար:

2012 թվականի հոկտեմբերի 4-5-ին Կիեվ քաղաքում կայացավ ԱՊՀ երկրների արհմիությունների իրավաբանների և տնտեսագետների հանդիպումը, որը նպատակ ուներ այդ երկրների հարկային օրենսդրության և թոշակառուների վիճակի հետ կապված փորձի փոխանակումը: Հանդիպմանը ՀԱՄԿ-ի կողմից մասնակցեցին ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Է.Մանասերյանը և Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ, ՃՀՄ նախագահության անդամ Ա.Ասատրյանը: Հանդիպմանը հրավիրված էին Մեսինայի համալսարանի պրոֆեսոր Բրունո Սերջին, Եվրոպական արհմիութենական ինստիտուտի ավագ հետազոտող, փորձագետ Բելա Գալդոմին, Բուլգարիայի ազգային և համաշխարհային տնտեսության համալսարանի պրոֆեսոր, փորձագետ Կրաստյո Պետկովը, որոնք ներկայացրեցին մասնակիցներին մակրոտնտեսական իրավիճակը և դրա հեռանկարները տարածաշրջանում: Որոշվեց հաջորդ հանդիպման թեմա դարձնել նվազագույն աշխատավարձի ձևավորման սկզբունքները:

ԱՆՑ ՈՒ ԴԱՐՁ

- Իջևանի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության նախագահ ընտրվեց Աիդա Աչինյանը:
- Կայացավ ԲՄՓ աշխատողների արհեստակցական կազմակերպության հաշվետու-ընտրական ժողովը, արհեստակցական կազմակերպության նախագահ վերընտրվեց Արա Գևորգյանը:
- Վարչապետի հրամանով Կոտայքի մարզպետի տեղակալ նշանակվեց Կարեն Մարգարյանը: Շնորհավորում ենք պարոն Մարգարյանին և ցանկանում բեղմնավոր աշխատանք:
_Կայացավ Հրազդանի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության հաշվետու-ընտրական ժողովը: Հրազդանի տարածքային միության նախագահ ընտրվեց Արտյոմ Հունանյանը:
- 2012թվականի նոյեմբերի 23-ին կայանալել է ՀԱՄԿ-ի համագումարը: Համագումարի պատվիրակներ Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից ճյուղային միության նախագահության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 19 նիստի որոշմամբ ընտրվեցին Ելենա Հակոբովան – ՃՀՄ նախագահ, Լևոն Խաչատրյանը – ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի տնօրեն, Վանիկ Բաբաջանյանը – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, Նորա Մելքոնյանը – ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, Սեդա Մխիթարյանը – Խարբերդի մասանգիտացված մանկատան աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ:

* * *

2011 թվականի մայիսի 26-ին Ազգային ժողովը ընդունեց “2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին” ՀՀ օրենքը: Համաձայն այդ օրենքի, այն կազմակերպությունները որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:

Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հարկային մարմինները ցուցակներ են ներկայացրել պետական ռեգիստր կազմակերպությունները լուծարելու համար: Լուծարված կազմակերպությունների մեջ ընդգրկվել են հարկային հաշվետվություններ չներկայացրած բազմաթիվ արհեստակցական կազմակերպություններ: ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժինը ՀԱՄԿ-ի նախագահի առաջադրանքով նամակ է պատրաստում համապատասխան գերատեսչություններին, լուծարումները չեղյալ համարելու նպատակով:

ՀԱՐՑ ու ՊԱՏԱՍԽԱՆ

հարց. Ինչպես է գանձվելու արհմիության անդանավճարը “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

պատասխան. համաձայն Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամ արհեստակցական կազմակերպությունների կանոնադրությունների՝ արհեստակցական կազմակերպության անդամի անդամավճարի ամենամսյա չափը սահմանվում ստացած եկամտի մեկ տոկոսի չափով: Հետևաբար աշխատավարձը հաշվարկելիս, հաշվապահությունը պետք է գանձի եկամտահարկը՝ ըստ օրենքի և 1% արհմիության անդամավճարը: